

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2017թ. ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ
ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ**

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Լոռու մարզում 2017թ. գործել է.

ա/ 6 բուհ, որից 2-ը ոչ պետական, 9 միջին մասնագիտական և 2 արհեստագործական պետական ուսումնական հաստատություններ
բ/ 69 նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ 4797 երեխաներով, 2 ոչ պետական ՆՈՒՀ և 34 նախակրթարան /34 խումբ, 585 երեխա/
գ/ 163 հանրակրթական ուսումնական հաստատություն, այդ թվում 80-ը՝ միջնակարգ, 68-ը՝ հիմնական, 1-ը՝ հատուկ / մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ/, 11 ավագ դպրոց և 3 վարժարան /2-ը՝ մասնագիտացված/:

2016-2017թթ. ուսումնական տարում մարզի 163 հանրակրթական դպրոցներում աշխատել են **3178** ուսուցիչ, այդ թվում **2798**-ը՝ մարզային ենթակայության դպրոցներում:

Ուսուցիչ աշակերտ հարաբերակցությունը 2016-2017թթ.ուսումնական տարում կազմել է 1/8.5:

Մարզային ենթակայությամբ գործող 149 դպրոցներն ընդգրկում են՝

- ◆ միջնակարգ դպրոցներ - 80
- ◆ վարժարան - 1
- ◆ հիմնական դպրոցներ - 68
- ◆ 26751 սովորողները կոմպլեկտավորվել են 1607 դասարաններում


Նախադպրոցական կրթություն

Նախադպրոցական կրթության ծառայությունների որակի և մատչելիության բարելավումը շարունակում է մնալ որպես տարրական կրթության գերակայություն:

Առանձնակի կարևորվում է նախադպրոցական ավագ տարիքի երեխաներին տարրական կրթությանն արդյունավետ նախապատրաստելու հիմնախնդիրը, ինչը կապահովի երեխաների համար հավասար մեկնարկային պայմաններ տարրական դպրոցում ուսումը շարունակելու համար:

Մարզում 2009 թվականից գործում են նախակրթարաններ, որոնք սկզբում գործել են «Մատչելիության ապահովում» վարկային ծրագրի շրջանակներում, այնուհետև՝ սկսած 2011 թվականից, աստիճանաբար անցել են պետական ֆինանսավորման:

2012 թ-ին նախակրթարաններ են գործել մարզի 5 դպրոցներում (6 խումբ, 127 երեխա), 2013թ-ին՝ թվով 22 դպրոցում (27 խումբ, 451 երեխա) և 2014թ-ին՝ թվով 21 դպրոցում (23 խումբ, 400 երեխա), 2015թ-ին՝ 21 դպրոցում (21 խումբ, 355 երեխա), 2016թ-ին՝ թվով 24 դպրոցում (26 խումբ, 420 երեխա) , 2017թ-ին՝ 34 դպրոցում (34 խումբ, 585 երեխա):



2017 թվականին Լոռու մարզում գործել է 69 նախադպրոցական ուսումնական հաստատություն: Գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային հզորությունը կազմում է 5443 երեխատեղ, որի միայն 88%-ն է շահագործվում:

2017թ. ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվել են 165 խմբով, որտեղ ընդգրկվել է 4856 երեխա: Ընդ որում, 5-6 տարեկանների թիվը 1805 է: Երեխա/դաստիարակ հարաբերակցությունը կազմում է 1/14 նախորդ տարվա 1/13-ի փոխարեն:

2013-2017 թվականներին նախադպրոցական հաստատությունների քանակի և դրանցում ընդգրկված երեխաների թվի դինամիկան տրված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Տարեթիվը	Մանկապարտեզների թիվը	Խմբերի թիվը	Հաճախող երեխաների թիվը	5-6 տարեկան երեխաների թիվը
2013	68	149	4346	1638
2014	69	155	4575	1828
2015	68	154	4538	1844
2016	68	152	4379	1807
2017	69	165	4856	1805

Գյուղական համայնքների ՆՈՒՀ-երում ընդգրկված երեխաների թիվը կազմել է մարզի ՆՈՒՀ-երում ընդգրկված երեխաների ընդհանուր թվի 24%-ը: Այս բացը լրացվում է գյուղական համայնքների դպրոցների կազմում գործող նախակրթարանների միջոցով: Եթե նախակրթարաններում ընդգրկված երեխաների թիվն ավելացնենք ՆՈՒՀ-երի 5-6 տարեկան երեխաների թվին, ապա 5-6 տարեկան երեխաների թիվը կկազմի մարզի ՆՈՒՀ-երում ընդգրկված երեխաների ընդհանուր թվի 70,4 %-ը:

Ընթացիկ տարում վերահսկողություն է իրականացվել նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից ՀՀ կրթության մասին օրենսդրության եւ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարման նկատմամբ: Ուսումնասիրություններ են իրականացվել 13 համայնքների (Ստեփանավանի, Եղեգնուտի, Մարգահովիտի, Վահագնաձորի, Հոբարձու, Ալավերդու, Թումանյանի, Արևածագի, Ծաղկաբերի, Թեղուտի,

Ճոճկանի, Շիրականուտի, Դսեղի) ՆՈՒՀ-երում, տրվել են հանձնարարականներ՝ ուսումնասիրությունների արդյունքների ընթացքում բացահայտված ՀՀ օրենսդրության պահանջների, խախտումների և թերությունների վերացման վերաբերյալ:

Արդեն 3-րդ տարին է դրական տեղաշարժ է արձանագրվում երեխա/դաստիարակ հարաբերակցության մեջ: Նախկինում 12 երեխայի համար հաշվարկվում էր 1 դաստիարակ: Կրթական բարեփոխումների արդյունքում 2012թ-ին երեխա-դաստիարակ հարաբերակցությունը դարձել էր 1/12,4: 2013, 2014թթ. այն կազմել է 1/12,5, 2015 թ-ին՝ 12,6, 2016թ-ին՝ 1/13, հաշվետու տարում՝ 1/14:

Միջնակարգ կրթություն

Մարզային ենթակայության 149 դպրոցում աշխատում է **2798** ուսուցիչ, որոնցից 2602-ը ունի բարձրագույն մանկավարժական, կամ բարձրագույն կրթություն /91.4%-ը/, մնացած 196-ը՝ միջին մասնագիտական կամ թերի բարձրագույն:

Ուսուցիչ-աշակերտ հարաբերակցությունը մարզում կազմում է 1/9.5:

Դասարանների միջին խտությունը 16.4 - է:

Ուսուցչի միջին ծանրաբեռնվածությունը կազմում է շաբաթական 17.6 ժամ:


Հանրակրթական հաստատությունների հիմնական ցուցանիշները ըստ տարիների ներկայացված են աղյուսակ 2-ում և ստորև ներկայացված գծապատկերում:

Աղյուսակ 2.


Ցուցանիշներ	2013/2014	2014/2015	2015/2016	2016/2017	2017/2018
Դպրոցների քանակը	151	151	151	150	149
Աշակերտների թվաքանակը՝ այդ թվում	24861	25226	26120	26435	26751
1-ին դասարան	2848	3017	3055	3223	3118

/9-րդ/ դասարան	2183	1132	2145	2031	2346
/12-րդ/ դասարան	1135	1190	1096	959	498
Միջին հաշվով 1 դպրոց հաճախում են	160	160	173	176	179
Դասարանների միջին քանակը մեկ դպրոցում	10.3	10.4	10.6	10.7	10.7
Միջին հաշվով մեկ դասարան հաճախում են	15.9	15.9	16.2	16.4	16.7

Գծապատկերից երևում է, որ 2017 թվականի սեպտեմբերին նախորդ տարվա համեմատ արձանագրվել է աշակերտների թվի աճ՝ 316-ով:



Աշակերտների թիվն ըստ կրթական մակարդակների նախորդ տարվա համեմատ աճել է տարրական դպրոցում՝ 1.76%, միջին դպրոցում՝ 2.7%, ավագ դպրոցում՝ նվազել է 10,1%:



Լոռու մարզի հանրակրթության ոլորտում 2017 թվականի ՏԱՊ-ով նախատեսված միջոցառումներից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների հաշվառում, դպրոցահասակ երեխաներին՝ հանրակրթական հաստատություններ ներգրավման աշխատանքներ:

Հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում համակարգվել և վերահսկվել են մարզի դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը և նրանց ընդգրկումը հանրակրթական դպրոցներ:

Արդյունքում՝ 2017թ. սեպտեմբերին 1-ին դասարան է ընդունվել 3118 երեխա: Այս ցուցանիշը 105-ով պակաս է նախորդ տարվա ցուցանիշից:

Ըստ դպրոցների տվյալների 2017թ. մարզի տարածքում հայտնաբերվել են հանրակրթական հաստատություններում գրանցված, սակայն պարտադիր

ուսուցումից դուրս մնացած 54 երեխաներ (հիմնականում մեկնել են արտերկիր): Պարտուսից դուրս մնացած երեխաների ծնողների կամ խնամակալների հետ կազմակերպվել են հանդիպումներ, կատարվել են բացատրական աշխատանքներ:

Կրթության ոլորտում աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրին միտված մարզի պարտուսի տարիքի երեխաների ընդգրկվածությունը հանրակրթական համակարգում կազմում է 99,8%:

ՀՀ օրենքների, ՀՀ Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, կառավարության և վարչապետի որոշումների և այլ նորմատիվ ակտերի կադարման ապահովում, ինչպես նաև՝ օրենսդրության կադարելագործման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

Խորհրդատվական օգնություն է ցուցաբերվել մարզի 149 հանրակրթական դպրոցների խորհուրդներին՝ դպրոցների տարիֆիկացիաների կազմման, հաստիքացուցակների ձևավորման, ֆինանսատնտեսական և ուսումնադաստիարակչական հարցերի քննարկումների կազմակերպման, տնօրենների ու ուսուցիչների ընտրությունների և այլ հարցերում:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության թիվ 801-Ն որոշումը՝ 2017 թ-ի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին կազմակերպվել է մարզային ենթակայության 148 հանրակրթական դպրոցների կանոնադրությունների նոր խմբագրման և հաստատման գործընթացը:

Ներկայացվել է թվով երկու ՀՀ կառավարության որոշման նախագծեր՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Հ. Թումանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը գույք ամրացնելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Մարշալ Բաղրամյանի անվան N 26 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը միացման ձեվով վերակազմակերպելու մասին», արդյունքում կայացվել են ՀՀ կառավարության որոշումներ:

ՀՀ Լոռու մարզպետի հանձնարարությամբ հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից ՀՀ կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը և սովորողների կրթական մակարդակը ուսումնասիրելու նպատակով 2017թ-ի փետրվար-ապրիլ ամիսների ընթացքում մարզպետարանի աշխատակազմի


կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի աշխատակիցների կողմից կազմակերպվել են այցելություններ Ստեփանավանի տարածաշրջանի թվով 9 դպրոցներ (Ստեփանավանի թ. 1 հ/դ, Ստեփանավանի թ. 2 հ/դ, Ստեփանավանի թ. 3 հ/դ, Ստեփանավանի թ. 6 մ/դ, Ստեփանավանի թ. 1 վարժարան, Վարդաբլուրի մ/դ, Կուրթանի մ/դ, Գյուլագարակի մ/դ և Ամրակիցի մ/դ): Տրվել են թեմատիկ գրավոր աշխատանքներ <<Հայոց լեզու>>, <<Մաթեմատիկա>> և <<Ինֆորմատիկա>> առարկաներից, որոնց մասով կատարվել է վերլուծություն: Արդյունքում ի հայտ եկած թերությունները շտկելու համար տրվել են համապատասխան հանձնարարականներ, որոնց պարտադիր կատարումը վերահսկվում է կրթության բաժնի կողմից: Գործընթացը կրում է շարունակական բնույթ:

Մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից 2017թ. ընթացքում կատարվել է ներքին աուդիտ մարզի թվով 49 հանրակրթական ուսումնական հաստատություններում: 49 հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսումնասիրության արդյունքները քննարկվել են մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի նիստերում և կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում՝ տնօրենների մասնակցությամբ: Արդյունքում՝ խախտումների համար երկու տնօրեն ստացել է << նկատողություն>> կարգապահական տույժը (Այգեհատի հ/դ, Շահումյանի մ/դ):

2017 թվականի ընթացքում ՀՀ Լոռու մարզային ենթակայության թվով 149 հանրակրթական դպրոցներից 14-ում կազմակերպվել են դպրոցի տնօրենի թափուր պաշտոնների համար մրցույթներ: ՀՀ Լոռու մարզպետի և դպրոցի տնօրենի միջև կնքված աշխատանքային պայմանագրի լուծումից հետո թվով 13 դպրոցում ժամանակավոր պաշտոնակատարներ նշանակվել են գործող տնօրենները, մինչդեռ 1 դպրոցում ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել դպրոցի փոխտնօրենը: Ուսուցչի թափուր տեղի համար կազմակերպվել և անցկացվել է **649** մրցույթ:

2017թ. հունվարից սկսած նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել մարզի **621** ուսուցիչների պարզ ընթացակարգով ատեստավորելու ուղղությամբ: Մասնավորապես, պատրաստվել և կրթության ազգային ինստիտուտի հետ համատեղ մշակվել է վերապատրաստման ենթակա ուսուցիչների վերապատրաստման ժամանակացույցը ըստ առարկաների, և ցուցաբերվել է աջակցություն ուսուցիչների վերապատրաստման գործընթացը կազմակերպելու համար: ՀՀ կառավարության 2010թ. հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշմամբ հաստատված հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի

ատեստավորման կարգի համաձայն 2017թ. ատեստավորման ներկայացված ուսուցիչներից պարզ ընթացակարգով ատեստավորվել են **581**-ը: Տարբեր պատճառներով վերապատրաստման դասընթացներին չեն մասնակցել, կամ մասնակցել են բայց չեն ատեստավորվել **40** ուսուցիչներ:



2017թ-ի հունվար-մարտ ամիսներին հաշվառվել են մարզի բոլոր դպրոցների 9-րդ դասարանի աշակերտները՝ ըստ <<Հայոց լեզու և գրականություն>>, <<Մաթեմատիկա>>, <<Օտար լեզու>>, <<Հայոց պատմություն>>, բնագիտական առարկաներ և << Ռուսաց լեզու>> առարկաներից ավարտական քննություններ հանձնելու ցանկությամբ:

Իրականացվել է ծավալուն նախապատրաստական աշխատանք ավարտական քննությունները 2016-2017 ուստարվա ավարտին և 2017-2018թ. ուստարվա համար նախատեսված 2017թ-ի դեկտեմբեր ամսին կայացած սովորողների գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման աշխատակարգի պահանջներին համապատասխան կազմակերպելու և անցկացնելու ուղղությամբ:

Դպրոցական շենքերի պահպանում և շահագործում

2017 թվականին կառուցման և նորոգման աշխատանքներ են իրականացվել թվով 8 հանրակրթական ուսումնական հաստատությունում, որից. կառուցում՝ 2, վերակառուցում՝ 1. ջեռուցման լոկալ համակարգի մոնտաժում՝ 2, հիմնանորոգում՝ 1, մասնակի նորոգում՝ 2.

- | | |
|---|----------------|
| 1. Վանաձորի թիվ 18 դպրոց /վերակառուցում/- | 57.0 մլն.դրամ |
| 2. Յաղդանի դպրոց /մասնակի նորոգում/- | 4.0 մլն.դրամ |
| 3. Ախթալայի թիվ 2 դպրոց /հիմնանորոգում/_ | 106.6 մլն.դրամ |
| 4. Վանաձորի թիվ 7 դպրոց /կառուցում/- | 360 մլն.դրամ |
| 5. Արևաշողի դպրոց /մարզադահլիճի կառուցում/- | 16 մլն.դրամ |
| 6. Մարգահովիտի դպրոց /մարզադահլիճի նորոգում/- | 17.9 մլն.դրամ |
| 7. Ամրակիցի դպրոց /լոկալ ջեռուցման համակարգի մոնտաժում/- | 0.960 մլն.դրամ |
| 8. Վանաձորի թիվ 15 դպրոց /լոկալ ջեռուցման համակարգի մոնտաժում/- | 0.950 մլն.դրամ |

Ներդրումներն ընդհանուր կազմել է 563.4 մլն. դրամ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը և զարգացումը դիտելով առաջնահերթություն, մարզը հայտարարվել է «Սմարթ» մարզ: Այդ գաղափարախոսության շրջանակներում մարզի 16 հանրակրթական դպրոցներում ստեղծվել են «Սմարթ» դասարաններ՝ հագեցած ամենաժամանակակից տեխնիկական միջոցներով, բարձր հզորության համակարգիչներով: Դասասենյակների վերանորոգումը, կահավորումը, համակարգչային տեխնիկայի ձեռքբերումը իրականացվել է դպրոցների խնայողությունների հաշվին: Յուրաքանչյուր դպրոց միջինը 5-6 մլն դրամի սահմաններում (ընդհանուր 73.1 մլն.դրամ) ձեռք է բերել գույք և տեխնիկական միջոցներ:

3-րդ փուլում նախատեսվում է այդպիսի դասարանների ստեղծում ևս 7 հանրակրթական դպրոցներում:

Տնօրենների կողմից սահմանված կարգով և պարբերականությամբ տեղեկատվություն է ներկայացվել գույքագրման, շենք-շինությունների ֆիզիկական վիճակի մասին: Ստացված տեղեկատվությունը մասնագիտական վերլուծության է

ենթարկվել, որը հիմք է ծառայել հիմնանորոգման, արդիականացման ծրագրերի մշակման համար:

Մարզային ենթակայության թվով 149 հանրակրթական ուսումնական հաստատություններից 66-ը ջեռուցումը իրականացնում է լոկալ համակարգով /բնական գազ, կաթսայատուն կամ փոքր հզորության կաթսա/, 44-ը գազի վառարանով, 22-ը վառելիքայտով, 19-ը էլեկտականությամբ, 2-ը հեղուկ վառելիքով /Ջրաշեն, Արմանիս - երկու էներգակիր, Վանաձորի թիվ 23 , Արևաշող- գազի վառարան և փոքր հզորության կաթսա/:

Մարզային ենթակայության թվով 44 գազի վառարանով ջեռուցվող /փաստացի ջեռուցվում է 458 սենյակ/ հանրակրթական ուսումնական հաստատություններում «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Լոռու գազաֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղի կողմից պարտադրվում է գազսպառիչ սարքավորումներ /գազի վառարաններ/ տեղադրված սենյակներում մասնագիտացված կազմակերպությունների միջոցով տեղադրել վթարային անջատիչ կափույր՝ միացված այրվող գազերի ազդանշանային սարքին, ինչպես նաև վառարանները շրջափակել հրակայուն նյութերից պատրաստված ցանկապատով:

Մեկ ազդանշանային սարքի և անջատիչի մոնտաժման համար պահանջվում է շուրջ 47.0 հազ. դրամ, իսկ հրակայուն նյութերից պատրաստված ցանկապատը կարող է արժենալ շուրջ 30.0 հազ. դրամ: Այսպիսով, յուրաքանչյուր ջեռուցվող սենյակի համար կպահանջվի լրացուցիչ 77.0 հազ. դրամ:


Խնդրի լուծումը տեսնում ենք հետևյալ կերպ.

- Այն դպրոցները, որոնք ընդգրկված են կառուցման, հիմնանորոգման /կամ ընթանում են շինարարական աշխատանքներ/ կամ օպտիմալացման ծրագրերում՝ խնդիրը կլուծվի հիմնանորոգման ընթացքում: Դրանք թվով 7-ն են:
- Հաշվի առնելով դպրոցի ֆինանսական հնարավորությունները՝ թվով 5 դպրոցներում նախատեսում ենք տեղադրել փոքր հզորության ջեռուցման կաթսաներով /բնական գազով աշխատող/ ջեռուցման համակարգեր, թվով 6 դպրոցներում՝ մոնտաժել նոր մալուխներ և տեղադրել էլեկտրական ջեռուցիչներ: Մեկ ջեռուցվող սենյակի համար մալուխների և էլեկտրական ջեռուցիչների մոնտաժման համար կպահանջվի շուրջ 80-120 հազար դրամ:

Թվով 22 դպրոցներ չունեն ֆինանսական բավարար միջոցներ, դրանցում մալուխների և էլեկտրական ջեռուցիչների մոնտաժման համար: Խնդրի լուծման համար լրացուցիչ կպահանջվի շուրջ 25.0 միլիոն դրամ:

Այս ընթացքում Ամրակիցի դպրոցում մոնտաժվել է փոքր հզորության ջեռուցման կաթսաներով /բնական գազով աշխատող/ ջեռուցման համակարգ, Կուրթանի դպրոցում հիմնանորոգվել է ջեռուցման համակարգը և ջեռուցումը իրականացնում է փոքր հզորության կաթսաներով, Վանաձորի թիվ 15 դպրոցում մոնտաժվում է փոքր հզորության ջեռուցման կաթսաներով /բնական գազով աշխատող/ ջեռուցման համակարգ, Վանաձորի թիվ 23 դպրոցը գազի վառարանները փոխարինվել են էլեկտրական ջեռուցիչներով: Տաշիրի թիվ 1 դպրոցում կիրականացվի կաթսայատան, ջեռուցման համակարգի նորոգման և փորձարկման աշխատանքներ:

Նպատակային ֆինանսավորման առկայության դեպքում գազի վառարաններով ջեռուցում իրականացնող դպրոցներում վառարանները կփոխարինվեն փոքր հզորության ջեռուցման կաթսաներով /բնական գազով աշխատող/ ջեռուցման համակարգերով կամ էլեկտրական ջեռուցիչներով:



ՀՀ կառավարության 2006թ. հունվարի 26-ի թիվ 346-Ն որոշման համաձայն ՀՀ Լոռու մարզպետարանի ենթակայության թվով 2 դպրոցների ամրացված անշարժ գույքը հանձնվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը /մարզային ենթակայության թվով 149 հաստատություններին ամրացված գույքից հանձնված է 69-ինը/:

Առարկայական օլիմպիադաների կազմակերպում



Փետրվարի 9-ից մարտի 6-ը կազմակերպվել և անց է կացվել օլիմպիադանների տարածքային և մարզային փուլերը, որոնց մասնակցել են համապատասխանաբար՝ 1519 և 700 աշակերտներ: Մարզային փուլի արդյունքում 155 /նախորդ տարում՝ 115/ աշակերտներ իրավունք են նվաճել մասնակցելու օլիմպիադայի

հանրապետական փուլին:

Վերջնական արդյունքում մարզը ունեցել է հանրապետական փուլի 41 / նախորդ տարում՝ 34/ մրցանակակիր, որոնցից.


ա/ 1-ին կարգի դիպլոմ – 4 / նախորդ տարում՝ 4/

բ/ 2-րդ կարգի դիպլոմ – 6 / նախորդ տարում՝ 4/

գ/ 3-րդ կարգի դիպլոմ – 5/ նախորդ տարում՝ 12/

դ/ գովասանագիր – 26/ նախորդ տարում՝ 14/:

ՆԶՊ առարկայից օլիմպիադայի հանրապետական փուլի մասնակիցները թիմային հաշվարկով գրավել են 2-րդ տեղը:




Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ՀՀ նախագահի ամենամյա մրցանակաբաշխության <<Լավագույն աշակերտ 2017>> անվանակարգի հաղթողներ են ճանաչվել <<Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոցի>> աշակերտներ Ռոստոմ Պողոսյանը և Լիլիթ Պալյանը:

Նույն դպրոցի աշակերտներ Համլետ Խաչատրյանը և Սպարտակ Սադյանը մասնակցել են Աստանայում և Թալլանդում կայացած քիմիայի միջազգային օլիմպիադաներին և համապատասխանաբար արժանացել են 2 բրոնզե ու 1 արծաթե, 1 բրոնզե մեդալների:

2017թ-ի ընթացքում Լոռու մարզում ՀՀ Կառավարության հաստատած ծրագրի շրջանակում Պաշտպանության, ԿԳ նախարարությունների կողմից կազմակերպվել են մի շարք շարադրությունների մրցույթներ՝ միտված մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության զարգացմանը, անկախ և հզոր հայրենիքի կերտման գաղափարի խթանմանը մեր երիտասարդության շրջանում: ՀՀ Լոռու մարզպետի հովանու ներքո անց է կացվել <<Իմ ծննդավայրը>> խորագրով շարադրությունների մրցույթ, որի արդյունքում 10 լավագույն մասնակիցներ արժանացել են ՀՀ Լոռու մարզպետի մեծարմանը և խրախուսանքին:

Շախմատը Լոռու մարզի դպրոցներում

2014-15 ուսումնական տարում շախմատ առարկան ուսուցանվել է 10124 աշակերտի, 2015-16 ուսումնական տարում աճել է և կազմել 10268, 2016-17 ուսումնական տարում՝ 10286, իսկ 17-18 ուստարում՝ 10302:



2006թ.-ից մեծ հետաքրքրությամբ կազմակերպվում և անց է կացվում դպրոցականների շախմատի օլիմպիադաները: Մինչ այժմ անկացրած տաս օլիմպիադաներից Լոռու մարզի շախմատի դպրոցականների թիմը երեք անգամ նվաճել է չեմպիոնի կոչումը և մեկ անգամ զբաղեցրել է երկրորդ տեղը: 2017թ. հունվարից մինչև սեպտեմբեր ամիսը անց է կացվել Լոռու մարզի դպրոցականների շախմատի տասերորդ օլիմպիադայի երեք փուլերը, որին մասնակցել են տաս հազար հարյուր աշակերտներ: Հաշվի առնելով սովորողների հետաքրքրությունը շախմատ առարկայի նկատմամբ, ինչպես նաև առարկայի ազդեցությունը նրանց ստեղծագործական մտածողության վրա, մարզային ենթակայության հանրակրթական դպրոցներում ստեղծվել են շախմատի խմբակներ, որպես լրացուցիչ կրթական ծառայություն:



Ուսուցիչների մրցույթների կազմակերպում

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013թ. դեկտեմբերի 5-ի թիվ 1354-Ն հրամանով հաստատված <<Տարվա լավագույն ուսուցիչ, դաստիարակ, տնօրեն մրցույթների անցկացման մասին>> կարգի պահանջներին համապատասխան ՀՀ Լոռու մարզպետի 2017թ. մարտի 22-ի թիվ 37, 38 և 39 կարգադրություններով ստեղծվել են <<Տարվա լավագույն տնօրեն>>, <<Տարվա լավագույն ուսուցիչ>> և <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթների անցկացման հանձնաժողովներ: Մարտ-ապրիլ ամիսների ընթացքում նախապատրաստվել և քննարկվել են

<<Տարվա լավագույն ուսուցիչ>>, <<Տարվա լավագույն տնօրեն>>, << Տարվա լավագույն դաստիարակ>> մարզային փուլի մասնակիցների գործերը, ստեղծվել են համապատասխան հանձնաժողովներ՝ նրանց մոտ դասալսումներ կազմակերպելու համար: 2016-2017 ուսումնական տարվա Լոռու մարզի տարվա լավագույն ուսուցիչ է ճանաչվել <<<< Լոռու մարզի Վանաձորի թիվ 3 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի դասվար Լուսինե Միրաբյանը: Լոռու մարզի <<Տարվա լավագույն տնօրեն>> անվանակարգում 2016-2017 ուսումնական տարվա լավագույն տնօրեն է ճանաչվել <<<< Լոռու մարզի Վանաձորի թիվ 30 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրեն Սուսաննա Դարբինյանը, իսկ <<Լավագույն դաստիարակ>> անվանակարգում հաղթող է ճանաչվել Ալավերդու թիվ 6 նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակ Արմինե Ձավարյանը:



Հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի օգոստոսի 20-ի թիվ 734-Ա/Ք հրամանով հաստատված <<Հայոց լեզու և գրականություն>>, <<Հայոց պատմություն>>, <<Հայոց եկեղեցու պատմություն>>, բնագիտական /ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն/ առարկաների ուսուցիչների և

դասվարների <<Լավագույն ուսուցիչ>> հանրապետական մրցույթի անցկացման կարգը՝ ՀՀ Լոռու մարզպետի 2017թ. սեպտեմբերի 13-ի թիվ 167 կարգադրությամբ վերը նշված մրցույթի մարզային փուլի անցկացման նպատակով ստեղծվել է մարզային գնահատող հանձնաժողով: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ մրցույթի մարզային փուլի հաղթողներ ճանաչված ուսուցիչները Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մասնակցեցին ՀՀ ԿԳ նախարարության և Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին 2-րդի օրհնությամբ կազմակերպված <<Լավագույն ուսուցիչ>> մրցույթի հանրապետական փուլին: Ս/թ դեկտեմբերի 15-ին կազմակերպվեց հաղթողների մրցանակաբաշխության արարողությունը, որին Լոռու մարզից Վանաձորի Սայաթ-Նովայի անվան N 10 ավագ դպրոցի ուսուցչուհի Լիանա Մատինյանը «Հայոց պատմություն» առարկայից և Վանաձորի թիվ 19 հիմնական դպրոցի ուսուցչուհի Նազիկ Գիշյանը «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայից արժանացան 2-րդ կարգի մրցանակների:

Պարգևատրված ուսուցիչներին տրվել են նաև խրախուսական նվերներ:

2017թ. կազմակերպվել է <<Տարվա լավագույն զինղեկ և Լավագույն քաղաքաշտապանության շտաբի պետ>> մրցույթը, որի մարզային փուլում հաղթող ճանաչվեցին «ՀՀ Լոռու մարզի Ամրակիցի միջնակարգ դպրոցի» զինղեկ Սասուն Սանասարի Անտոնյանը և «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ղ. Ալիշանի անվան թ.27 հիմնական դպրոցի» զինղեկ Գագիկ Վազգենի Պապյան:

Հատուկ /ներառական/ կրթություն

2016-2017 ուստարում ներառական կրթություն են իրականացրել մարզի 16 հանրակրթական դպրոցներ՝ 471 վկայագրված աշակերտների համար:

2017 թվականի սեպտեմբերից Լոռու մարզում իրականացվում է համընդհանուր ներառական կրթություն: Լոռու մարզի հատուկ դպրոցների վերակազմակերպման արդյունքում մարզի հանրակրթական դպրոցներ են տեղափոխվել 98 աշակերտ, որի արդյունքում 2017-18 ուստարում ներառական կրթություն են իրականացնում մարզի 53 դպրոցներ՝ 662 վկայագրված աշակերտների մասնակցությամբ:

2016-17թթ ներառական կրթության վերաբերյալ Կրթության ազգային ինստիտուտը հնգօրյա վերապատրաստման դասընթացներ է կազմակերպվել մարզի 161 դպրոցներում՝ 3760 ուսուցիչների համար: Բացի այդ 2017 թվականին մարզի ուսումնական հաստատությունների 139 ուսուցչի օգնականների համար իրականացվել են վերապատրաստման ծրագրեր:

Հանրակրթական դպրոցների տնօրենների և փոխտնօրենների մասնակցությամբ ներառական կրթության վերաբերյալ խորհրդակցություններ են կազմակերպվել Լոռու մարզպետարանում, Վանաձոր, Ստեփանավան, Սպիտակ և Ալավերդի քաղաքներում, որին մասնակցում էին Լոռու մարզային իշխանության ներկայացուցիչները, մարզի համայնքների ղեկավարները, ինչպես նաև շահագրգիռ այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ: Նպատակը՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար բարենպաստ միջավայրի և հնարավորությունների ստեղծելուն աջակցելն էր՝ փոխադրված դպրոցներում:

Մարզում ստեղծվել է աշխատանքային խումբ, որում ընդգրկված են մարզպետարանի աշխատակազմի առանձին ստորաբաժանումների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Մասնագիտական աշխատանքային խումբը

2018 թվականի փետրվարից սկսած պարբերաբար կայցելի դպրոցներ՝ տեղում ուսումնասիրելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների խնդիրները, կնպաստի ծնողների և ուսուցիչների շրջանում ներառական կրթության վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը:

Հանրապետական գործադիր մարմինների հետ համագործակցության ապահովում և դրանց քննարկմանը վերջիններիս իրավասությանը վերաբերող մարզին առնչվող հարցերի ներկայացում:

Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը 2017 թվականի ընթացքում մասնակցել է գործադիր մարմինների կողմից կազմակերպված բազում քննարկումների, խորհրդակցությունների, հանդիպումների: Կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներին առնչվող հարցերի շուրջ կարծիքներ և առաջարկություններ են ներկայացվել գործադիր մարմինների կողմից ուղարկված նախագծերի վերաբերյալ:

Պաշտպանության, Կրթության, Մշակույթի, Սպորտի և երիտասարդության, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների հետ համագործակցությամբ մարզում իրականացվել են տարաբնույթ միջոցառումներ, սպորտային և ռազմամարզական խաղեր:

Մարզում գործող 6 բուհերի՝ որից 2-ը ոչ պետական, 9 միջին մասնագիտական և 2 արհեստագործական պետական ուսումնական հաստատությունների հետ համագործակցելով և համապատասխան ուսումնասիրություններ իրականացնելով, մարզի սոցիալ-տնտեսական զարգացումների վերաբերյալ առաջարկություններ են ներկայացվել ՀՀ համապատասխան նախարարություններ՝ մասնագիտությունների ընտրության հետ կապված: /Այս գործընթացը իրականացվում է յուրաքանչյուր տարի/:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Աճող սերնդի դաստիարակության գործում կարևոր դեր է խաղում հանրակրթական դպրոցում ռազմահայրենասիրական աշխատանքների կազմակերպումը: Այդ խնդիրների լուծման ուղղությամբ էական աշխատանք է կատարվել Լոռու մարզի հանրակրթական դպրոցներում: Հանրակրթության բնագավառում առանձնահատուկ նշանակություն ունի ՆԶՊ առարկայի դասավանդման գործընթացի կազմակերպումը: Նրա նպատակն է պատրաստել ռազմահայրենասիրական ոգով դաստիարակված ռազմագիտական անհրաժեշտ գիտելիքներ և բարոյականային բարձր հատկություններ ունեցող պատանիներ: Այս

գործում մեծ դեր ունի ՆԶՊ առարկայի դասավանդման որակը: Մարզի դպրոցներում կա 248 միավոր ուսումնական զենք, որից 130-ը ուսումնական ինքնաձիգ զենք է, 19-ը՝ նռնականետ, 99-ը՝ օդամղիչ հրացան: 2017թ-ին դպրոցների ռազմագիտության դասասենյակները և լսարանները նորացվել են համապատասխան դիդակտիկ պարագաներով, ցուցադրական նյութերով, ստենդներով և տեսաֆիլմերով:

«Ես եմ» և «Պատիվ ունեմ» ծրագրերի հանրային քննարկումների շրջանակում կազմակերպվել են հանդիպում-խորհրդակցություններ դպրոցների տնօրենների, փոխտնօրենների և ՆԶՊ առարկայի ուսուցիչների մասնակցությամբ: Ծրագրերի շարունակականությունն ապահովելու նպատակով դպրոցների տնօրեններին հանձնարարվել է նմանատիպ հանրային քննարկումներ կազմակերպել նաև ավագ դասարանների սովորողների և նրանց ծնողների մասնակցությամբ:

ՆԶՊ առարկայից 2017թ. դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլին Լոռու մարզից մասնակցել են 7 աշակերտներ: Թիմային հաշվարկով ռազմականացված խաղերից թիմը գրավեց 2-րդ տեղը:



2017թ. նոյեմբերին կազմակերպվել և անց է կացվել «Կորյուն» ռազմամարզական խաղերի տարածքային փուլը: Տարածքային փուլին մասնակցել է 21 թիմ՝ 210 մասնակիցներով, որից 5 թիմ՝ 50 մասնակիցներով, անցել է

մարզային փուլ:

2017թ. մայիս ամսին հաջողությամբ կազմակերպվեցին մեկօրյա ռազմադաշտային պարապմունքները: Դրանց մասնակցեցին 11-րդ դասարաններում սովորող 235 պատանիներ:

Համագործակցված աշխատանք է կատարվել Լոռու մարզի Փրկարարական վարչության հետ:

Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության գործում կարևոր նշանակություն ունի շրջանավարտների կողմից ռազմական ուսումնական

հաստատություններ ընդունվելու աշխատանքների կազմակերպումը: Ուսումնական հաստատություններում, ի շնորհիվ տնօրենների և զինղեկների ռազմահայրենասիրական դաստիարակությունը կարևորելու և գործընթացը բարձր մակարդակով կազմակերպելու՝ 2017թ. հանրապետության տարբեր ՌՈւՀ-եր է ընդունվել 10 դիմորդ:

Տարածքային զինկոմիսարիատների հետ համագործակցված աշխատանքներ են տարվել շրջանավարտների ուղղությամբ՝ ՀՀ, ԱՊՀ և արտասահմանյան երկրների բուհեր ընդունվելու համար: 2017թ. գարնանը մարզի բոլոր տարածաշրջաններում և քաղաքներում կազմակերպվել են հանդիպումներ շրջանավարտների, ՀՀ ՊՆ և ռազմական բուհերի դասախոսների հետ: Նման հանդիպում է կազմակերպվել նաև նոյեմբեր ամսին՝ մարզի բոլոր տարածաշրջաններում 10-12-րդ դասարանցիների համար, որին մասնակցում էին ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակիցներ:

Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպման գործում կարևոր է դպրոցների հետ ռազմաշեֆական աշխատանքների կազմակերպումը: Ներկա դրությամբ մարզի բոլոր դպրոցները կապված են շեֆ - զորամասերի հետ և արդյունավետ աշխատանք են տանում սովորողների՝ ՀՀ ազգային բանակում ծառայության նախապատրաստելու ուղղությամբ:

Դասագրքերի և ուսուցչի ձեռնարկների բաշխումը


Դասագրքերի շրջանառու համակարգով 2017-2018 ուստարվա սկզբում բաշխվել է 39 անուն 56305 դասագիրք: Դասագրքերի վարձավճարների գանձումը մարզում կատարվել է 100 տոկոսով:

Ստացվել են տարրական դասարանների 14 անուն 25315 դասագիրք:

Ոչ պետական միջոցներով կրթական օբյեկտների եւ նախադպրոցական հաստատությունների մասով իրականացրած ներդրումներ

Պարենի Համաշխարհային Ծրագրի Հայաստանյան գրասենյակի կողմից մարզի 143 դպրոցներում իրականացվում է <<Դպրոցական սնունդ>> ծրագիրը, որի շրջանակներում տարրական դասարանների եւ նախակրթարանների 11627 երեխաների համար 1-անգամյա սնունդ է կազմակերպվում:

Ծրագրում ընդգրկված են նաև դպրոցներում գործող 34 նախակրթարանները: Նախադպրոցական կրթության զարգացման ուղղությամբ համագործակցություն է իրականացվել Կրթության ազգային ինստիտուտի, ԿԳՆ կրթական ծրագրերի կենտրոնի, միջազգային, բարեգործական կազմակերպությունների («Վորլդ Վիժն», ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի UNICEF, ԱՐԴԱ, DSC ֆրանսիական միության հայաստանյան մասնաճյուղ, «Փրկեցեք երեխաներին», «Քայլ առ քայլ և այլն), հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կառույցների հետ:



Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտեռյանի մոտ 22.03.2017թ. կայացած խորհրդակցության N 22/03 արձանագրության 3-րդ կետի՝ նախապատրաստվել է մարզի սոցիալապես անապահով, ծնողազուրկ 7-13 տարեկան 415 աշակերտների ցուցակը, որոնք իրենց ամառային հանգիստը 3 հերթափոխով անց են կացրել Հանքավանի «Լուսաբաց» մանկական առողջարարական ճամբարում: Պատշաճ մակարդակով կազմակերպվել է երեխաների մեկնումը եւ վերադարձը:

Մարզի 30 ուսման գերազանց առաջադիմություն ունեցող, սոցիալապես անապահով ընտանիքների աշակերտներին և սովորողներին նշանակվել է <<Լոռու դպրոց>> հիմնադրամի անվանական կրթաթոշակ 3000-10000 դրամի չափով: 15 շնորհալի երեխաների <<Լոռու մշակույթ և սպորտ>> հիմնադրամի կողմից նշանակվել է 10000-20000 դրամի չափով կրթաթոշակ:

Նոր ուսումնական տարվա կապակցությամբ օգոստոս-սեպտեմբեր ամիսների ընթացքում <<Լոռու դպրոց>> հիմնադրամի կողմից մարզի ավելի քան 1000 անապահով ընտանիքների դպրոցական երեխաների հատկացվել են 11 անուն գրենական պիտույքներ, գրքերի վարձավճարներ և զանազան կարգի այլ օգնություններ:

Դպրոցներում ինտերնետ կապով ապահովվածության ուղղությամբ և ՏՏ ոլորտում կադրավաճ աշխատանքները

Մարզի հանրակրթություն իրականացնող բոլոր դպրոցները ունեն համակարգիչներ, համակարգչային դասարաններ՝ ապահովված համացանցով: Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և զարգացման նպատակով հետևողական աշխատանք է տարվում դպրոցներում <<Սմարթ դասասենյակ>> ստեղծելու և կահավորելու ուղղությամբ:

Մարզային ենթակայության բոլոր 149 դպրոցներում ՀՀ կրթության և գիտության նախարարության կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի աջակցությամբ ստեղծվել և գործարկվել են կայքէջերը:

ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 1.4 գ. դրույթի կատարումն ապահովելու նպատակով դպրոցներում իրականացվում են տեսադասեր և հեռավար դասեր, որոնց կատարման վերաբերյալ եռամսյակային ամփոփ հաշվետվությունը ներկայացվում է ԿԳ նախարարություն:

Իրականացվել են <<Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին>> 2017-2018 ուսումնական տարվա վիճակագրական հաշվետվությունների ձևերի բաշխումը և հավաքագրումը:

Կրթական հաստատություններում աշխատավարձի ժամանակին վճարում

2017 թվականի ընթացքում մարզի դպրոցների աշխատավարձերի վճարումները յուրաքանչյուր ամսվա համար կատարվել է ժամանակին՝ մինչև հաջորդ ամսվա 5-6-ը, իսկ դպրոցների մեծամասնությունը դեկտեմբեր ամսվա համար՝ մինչև դեկտեմբերի 28-ը:

Մարզպետարանի եւ մարզային ենթակայության կազմակերպությունների կրթության բնագավառում իրականացրած գործունեության թափանցիկությունը և հրապարակայնությունը

Կրթության բնագավառում մարզպետարանի գործունեության մասին հաշվետվությունը տեղակայվում է ՀՀ Լոռու մարզպետարանի կայքում՝ **www.lori.mtad.am**:

Կրթության բնագավառում մարզպետարանի գործունեության մասին տեղեկատվություններ են հրապարակվում <<Լոռու մարզ>>, <<Վանաձորյան խճանկար>> թերթերում, ինչպես նաև տեղական հեռուստաալիքներում :

Մարզպետարանում գործում է «Թեժ գիծ»՝ 2-32-99 և 2-35-37 հեռախոսահամարներով:

ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

- ***Նախակրթարանների թիվը ավելացնելու հնարավորության ուսումնասիրություն և իրականացում:***

Ներկայումս մարզում գործում է 38 նախակրթարան, որից 32-ը ֆինանսավորվում են պետբյուջեից իսկ 6-ն առայժմ գործում են <<Կրթության մատչելիության ապահովում>> ծրագրի շրջանակներում: 2018 թվականին կուսումնասիրվի նախակրթարանների թիվը 5-ով ավելացնելու հնարավորությունը՝ Ալավերդու թիվ 9, Վանաձորի թիվ 9 դպրոցներում , Աքորի, Շնող, Մարգահովիտ համայնքներում: Արդյունքում դպրոցահեն նախակրթարաններում կապահովվի ավագ նախադպրոցական տարիքի երեխաների ընդգրկվածության աճ և երեխաների հաճախումների թվի ավելացում: Երեխաների համար կստեղծվեն հավասար մեկնարկային պայմաններ տարրական դպրոցում ուսումը շարունակելու համար:

- ***Մարզում գործող թերբեռնված դպրոցների ռացիոնալացման ուսումնասիրություն***

Մարզում գործում են դպրոցներ, որոնք թերբեռնված են և շենքային հզորությունները ռացիոնալ չեն օգտագործվում: Նմանատիպ դպրոցները հիմնականում չունեն ժամանակակից պահանջներին համապատասխանող շենքային պայմաններ և գույքային ապահովվածություն: Առանձին առարկաներ դասավանդվում են ոչ մասնագետների կողմից:

Թերբեռնված դպրոցներում կիրականացվի ուսումնասիրություն, ռացիոնալացման ենթակա դպրոցների ուղղությամբ: Արդյունքում աշակերտները կհաճախեն հարակից, գույքով և մասնագետ կադրերով ապահովված դպրոցներ: Կիրականացվի պետական բյուջեի միջոցների ռացիոնալ օգտագործում:

- ***ա/Մարզում«Սմարթ» դասարանների հիմնում ևս մի քանի հանրակրթական դպրոցներում :***

բ/Մարզկենտրոնում և փարածաշրջանային կենտրոններում բարձրակարգ մասնագետներով համալրված դպրոցների առանձնացում և օնլայն(առցանց) դասերի կազմակերպում գյուղական համայնքների դպրոցների հետ:

ա/ Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը և զարգացումը դիտելով առաջնահերթություն, մարզը 2017թ. հայտարարվել է «Սմարթ » մարզ: Այդ գաղափարախոսության շրջանակներում մարզի 16 հանրակրթական դպրոցներում ստեղծվել են «Սմարթ» դասարաններ՝ հագեցած ամենաժամանակակից տեխնիկական միջոցներով, բարձր հզորության համակարգիչներով: Դասասենյակների վերանորոգումը, կահավորումը , համակարգչային տեխնիկայի ձեռքբերումը իրականացվել է դպրոցների խնայողությունների հաշվին: Կրթության որակը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է մարզում ավելացնել նմանատիպ դպրոցների թիվը: Հիմնական նպատակն է հանրակրթական դպրոցները նախապատրաստել Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի, նոր կառուցվող «Սմարթ» կենտրոնի և նմանատիպ այլ կառույցների հետ համագործակցության ձևավորմանը /ուսուցիչների վերապատրաստում, աշակերտների ուսուցում, ինքնուրույն հետազոտական և կիրառական գործունեության իրականացում և այլն/:

Ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողների մոտ կարճանագրվի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գիտելիքների և մասնագիտական որակավորման բարձրացում, որը կբարձրացնի նրանց մրցունակությունը գործատուների կողմից ներկայացված թափուր աշխատատեղերի նկատմամբ պահանջների բավարման համար:

2018թ. նախատեսվում է « Սմարթ» դասարանների հիմնում Վանաձորի թիվ 1, թիվ 3, Գյուլագարակի հիմնական, Լեռնապատի, Ալավերդու թիվ 4, Օձունի թիվ 2 և Լեռնահովիտի միջնակարգ դպրոցներում/ հնարավոր է նման դասարաններ ունեցող դպրոցների քանակի ընդլայնում/:

բ/ Մարզում կան շատ դպրոցներ, որոնք թերբեռնված են: Դրանք հիմնականում գյուղական կամ սահմանամերձ դպրոցներն են:

Վերոգրյալ դպրոցներում չկան անհրաժեշտ քանակությամբ, բարձրակարգ մասնագետներ: Դասավանդող անձնակազմը բավարար չի տիրապետում կրթության ժամանակակից մեթոդներին և տեխնոլոգիաներին, դեռևս շոշափելի թիվ են կազմում ոչ մասնագետ կադրերը, որոնք խորությամբ չեն տիրապետում առարկային, չունեն մանկավարժական բավարար հմտություններ:

Արդյունքում ընդլայնելով ուսումնական գործընթացում տեղեկատվական-հաղորդակցման տեխնոլոգիաների՝ որպես ուսուցման և դասավանդման միջոցի կիրառումը, կստեղծվի բարձրակարգ մասնագետներով համալրված դպրոցների

բազա, կկազմվի ժամանակացույց՝ նախատեսելով շաբաթական առնվազն մեկ դպրոցի հետ հեռավար ուսուցմամբ դասի անցկացում համացանցի միջոցով:

• Երթևեկող աշակերտների փոխադրավարձի ամբողջական փոխհատուցում:

Մարզային ենթակայության թվով 149 հանրակրթական ուսումնական հաստատություններից 21-ը ունի երթևեկող աշակերտ: Մարզի շուրջ 300 երթևեկող աշակերտների փոխադրավարձը կազմում է 8.5 մլն.դրամ: /Փաստացի ֆինանսավորվել է 788.1 հազար դրամ, որը բաշխվել է առավել թվով երթևեկող աշակերտներ ունեցող 7 դպրոցներ միջև. Ձորամուտ, Սարատովկա, Արծնի, Շամլուղ, Մեծավան թիվ2, Լերմոնտովո, Մեծ Պառնի/

• Գյուղական դպրոցների մասնագետ ուսուցիչներով թերապահովվածություն.

(Տարեցտարի դպրոցները ստիպված են մի քանի անգամ տալ մրցույթների հայտարարություն, սակայն ժամերի քիչ լինելու պատճառով դիմողներ չեն լինում):

- **Դպրոցների նյութատեխնիկական հնարավորությունների բարելավում՝** ստեղծել ժամանակակից գրադարաններ /ռեսուրսային կենտրոններ, ինչպես նախատեսված է ավագ դպրոցներում/ ու լաբորատորիաներ, համալրել անհրաժեշտ համակարգչային սարքավորումներով և գրադարանային ֆոնդով:
- **Մարզի մի շարք դպրոցների արդիականացման անհրաժեշտություն** /շենքային պայմանների բարելավում, նյութատեխնիկական բազայի հարստացում և այլն/: Որոշ դպրոցներում բացակայում են կամ չեն գործում ջրամատակարարման, կոյուղու կամ ջեռուցման համակարգերը:

• Մարզում ընդհանուր թվով 10 քոլեջների, դպրոցների և մանկապարտեզների վերակառուցում, հիմնանորոգում և կառուցում

Մարզի մի շարք կրթական հաստատությունների շենքային պայմանները բավարար չեն որակյալ կրթական գործունեություն իրականացնելու համար: Այդ նպատակով նախատեսվում է 2018 թվականին կառուցման, վերակառուցման և հիմնանորոգման աշխատանքներ իրականացնել մարզի թվով 10 կրթական հաստատություններում:

Արդյունքում՝ կիրականացվի քոլեջների, հանրակրթական դպրոցների և մանկապարտեզների շենքային պայմանների բարելավում և որակյալ կրթություն ստանալու համար անհրաժեշտ պայմանների ստեղծում:

- **Մարզում գործող միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ռացիոնալացման հնարավորությունների ուսումնասիրություն և գործողությունների ծրագրի կազմում:**

/Վանաձորի և Սյեփանավանի գյուղատնտեսական քոլեջներում Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղում գյուղատնտեսական ուղղվածության միասնական ուսումնական կենտրոնի (կլաստերի) ստեղծում /:

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական հանձնաժողովի միջև 2016 թվականի դեկտեմբերին ստորագրված «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» ֆինանսավորման համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) շրջանակներում ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն առաջարկություն է ներկայացվել Համաձայնագրով նախատեսված նախապայմանները և թիրախները փոփոխելու և ՀՀ Լոռու մարզում՝ Վանաձորի և Սյեփանավանի գյուղատնտեսական քոլեջներում, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղում, գյուղատնտեսական ուղղվածության միասնական ուսումնական կենտրոն (կլաստեր) ստեղծելու մասին:

Արդյունքում՝ կունենանք կրթության որակի բարձրացում, որակյալ դասախոսական կազմի և ֆինանսական միջոցների կենտրոնացում: Ուսանողների ներհոսք այլ մարզերից և արտերկրից:

Ներկայումս առաջարկությունը քննարկման փուլում է գտնվում:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈԼՈՐՏ

ՀՀ Լոռու մարզում մշակութային քաղաքականության իրականացման և ապահովման նպատակով կազմակերպվում են պետական, ազգային և այլ տոներ, հիշատակի օրերի հետ կապված զանգվածային միջոցառումներ:

Կազմակերպված միջոցառումների վերաբերյալ հաշվետվություն

Ամանորյա և Սուրբ ծննդյան օրվան նվիրված հանդիսությունների կազմակերպում և անցկացում:

Ամանորին նվիրված թատերականացված ներկայացումներ են կազմակերպվել Վանաձորի «Հայքի» հրապարակում, Հովհ.Աբելյանի անվան պետական դրամատիկական թատրոնում, Վանաձորի քաղաքապետարանի Տիկնիկային և «Բոհեմ» կամերային թատրոններում, Գուսան Զաքարյանի անվան մշակույթի տանը: Կազմակերպվել են նաև այլ թատերականացված խմբերի ելույթներ, մարզի տարբեր համայնքներում, մշակութային տարբեր հաստատություններում:



Հայոց բանակի կազմավորման 25-րդ տարելիցին նվիրված հոբելյանական միջոցառումների սկիզբը հունվարի 28-ին մեկնարկվեց Վանաձորի զինվորական

պանթեոն այցով: Մարզային և քաղաքային իշխանության ներկայացուցիչներ, ազատամարտիկներ, բարեկամներ, ինչպես նաև քաղաքացիներ իրենց խոնարհումը բերեցին Արցախյան ազատամարտում նահատակված հերոսների հիշատակին: Կատարվեց հոգեհանգստի կարգ: Ծաղկեպսակներ խոնարհվեցին նաև Վազգեն Սարգսյանի կիսանդրու առջև:

Վանաձորի հայքի հրապարակում կազմակերպվեց զինվորական շքերթ:

Տոնական համերգ-հանդիսություններ են կազմակերպվել Վանաձորի Էդ.Կզարթմյանի անվան երաժշտական դպրոցի համերգասրահում, Լոռու մարզային գրադարանում, Վանաձորի գրադարանների կենտրոնացված համակարգի գրադարաններում: «Բոհեմ» կամերային թատրոնը բեմադրել է ներկայացում և Կամերային նվագախմբի ինչպես նաև Տ Չուխաջյանի անվան արվեստի դպրոցի սաները կազմակերպել են համատեղ համերգ՝ N զորամասի զինվորների համար: Մարզի գեղարվեստի դպրոցներում կազմակերպվել են «25 – ամյա Հայոց բանակ» խորագիրը կրող ցուցահանդեսներ, գրական-երաժշտական ցերեկույթներ: Համերգ-հանդիսություններ են կազմակերպվել նաև մարզի այլ քաղաքային և գյուղական համայնքների մշակույթի ակումբներում և կրթօջախներում:



Հայոց ցեղասպանության 102-րդ տարելիցին նվիրված մարզային միջոցառումներ.

Մարզում կազմակերպվել են Հայոց Մեծ եղեռնին նվիրված գիտական, գեղարվեստական և վավերագրական գրքերի ցուցադրություններ, թատերականացված ներկայացումներ, «Հայոց ցեղասպանության **102-րդ** տարելից. պատմական իրողություններ և պահանջատիրություն» խորագրով կազմակերպվել են գիտավերլուծական դասախոսություններ, Արևմտյան Հայաստանի պատմամշակութային հուշարձանների և հայտնի օտարերկրացիների կողմից Հայոց Մեծ եղեռնը դատապարտող հայտարարությունների վավերագրական նյութերի ցուցադրություն, Հայ Առաքելական Եկեղեցու Գուգարաց թեմի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցում և թեմի բոլոր եկեղեցիներում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված Սուրբ Պատարագի և հոգեհանգստի արարողություններ, երիտասարդական քայլերթեր:

Կազմակերպվել է մոմավառություն՝ Ծաղիկների և ծաղկեպսակների խոնարհում խաչքարին:

Մարզի բոլոր հանրակրթական դպրոցներում կազմակերպվել են գրական-երաժշտական ցերեկույթներ, հուշ-երեկոներ, բաց դասեր. (նվիրված Մեծ Եղեռնի զոհ դարձած հայ գրողներին): Կազմակերպվել են քաղաքական և հասարակական անվանի գործիչների հետ հանդիպումներ:



Մայիսի 28-ին վանաձորցիները հանդիսավորությամբ նշվեց Հանրապետության տոնը և Ղարաքիլիսայի հերոսամարտի 99-րդ տարեդարձը: Ավանդույթի համաձայն՝ տոնական միջոցառումը կազմակերպվեցին Ղարաքիլիսայի ճակատամարտի վայրում՝ «Կոտրած եկեղեցի» հուշակոթողի մոտ: Հանդիսությանը ներկա էին հանրապետության ինչպես նաև Լոռու մարզային պետական և հոգևոր իշխանության ներկայացուցիչներ, Երկրապահ կամավորականների միության անդամներ, մտավորականներ, արվեստագետներ, մշակույթի գործիչներ, հարյուրավոր վանաձորցիներ:



Մայիսի 9-ին մարզկենտրոն Վանաձորում մեծ շուքով նշվեց Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 72-ամյակը և Շուշիի ազատագրման 25-րդ տարեդարձը: Հայրենական մեծ պատերազմի զոհերի հիշատակին կառուցված հուշակոթողի մոտ, ուր առավոտից հնչում էր տոնական երաժշտություն, հավաքվել էր հոծ բազմություն:



ՀՀ Անկախության 26-ամյա հոբելյանին և Սահմանադրության օրվան նվիրված հանդիսություններ և տոնական համերգներ են կազմակերպվել մարզի համայնքներում, մասնակցությամբ մարզի լավագույն համույթների և անհատ կատարողների:

Վաստակավոր կոլեկտիվ, Հայաստանի Ազգային Ակադեմիական Երգչախմբի համերգը կայացել է Վանաձորի Շ.Ազնավուրի անվան մշակույթի պալատում, մաեստրո Հ. Չեքիջյանի ղեկավարությամբ:



Մարզի վաստակաշատ կանանց շնորհավորելու նպատակով այս տարի նույնպես կանանց տոնին նվիրված միջոցառում է կազմակերպվել մարզպետարանի դահլիճում: Կրթության, առողջապահության, տեղական ինքնակառավարման, ոստիկանության, դատախազության, ազգային անվտանգության, և այլ ոլորտների շուրջ 30 մտավորական կանանց շնորհավորել է Լոռու մարզպետ Ա. Նլբանդյանը, թեմի առաջնորդ Ս. Չուլջյանը և այլ պաշտոնատար անձինք :



Մշակութային կրթության աջակցության հիմնադրամի" նախաձեռնությամբ հանրապետության մարզերի երաժշտական եւ արվեստի դպրոցների երիտասարդ մանկավարժների համար անցկացվում են վերապատրաստման դասընթացներ: Մայիսի 12, 13-ին Վանաձորի Է.Կզարթմյանի անվան երաժշտական դպրոցում դաշնակահար դասատուների համար դասընթացները վարեց Երեւանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի պրոֆեսոր Անահիտ Ներսիսյանը: Դասընթացներին մասնակցեցին նաեւ Վանաձորի եւ Սպիտակի երաժշտական եւ արվեստի դպրոցների դասատուները, ովքեր ստացան նաեւ գործնական խորհրդատվություն՝ ներկա գտնվող աշակերտների հետ պարապելու ընթացքում: Նման դասընթացներ անցկացվել են նաեւ Ալավերդի եւ Ստեփանավանի երաժշտական եւ արվեստի դպրոցների դաշնակահար դասատուների համար պրոֆեսոր Ս.Քեչեկի ղեկավարությամբ:

«Պետական աջակցություն մշակութային միջոցառումներին»

**ծրագրի շրջանակներում կազմակերպվել են հետևյալ միջոցառում-
հանդիսությունները.**

ա/ «Պատանի երաժիշտ կատարողների» Լոռու մարզային մրցույթ-փառատոն

Փառատոնը անց է կացվել Վանաձորի Էդ. Կզարթմյանի անվան երաժշտական դպրոցում, մասնակցությամբ՝ մարզի քաղաքային և գյուղական համայնքների երաժշտական և արվեստի դպրոցների շուրջ 95 աշակերտների՝ մասնավորապես՝ Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան, Ալավերդի, Տաշիր, Օձունի, Շնող, Շիրակամուտ համայնքներից: Բոլոր մասնակիցները ՀՀ Լոռու մարզպետի կողմից պարգևատրվել են շնորհավորագրերով:

բ/ «Ազգային նվագարանների երգի-պարի, ասմունքի» ամենամյա Լոռու մարզային փառատոնը կայացել է «Լոռի» ժամանցի կենտրոնում, մասնակցությամբ՝ մարզի քաղաքային և գյուղական համայնքներից շուրջ 12 մանկապատանեկան պարային համույթների, 22 անհատ կատարողների, մասնավորապես՝ Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան, Ալավերդի, Տաշիր, Սարչապետ, Օձուն, Մեծավան, Շնող և այլ համայնքներից: Բոլոր մասնակիցները ՀՀ Լոռու մարզպետի կողմից պարգևատրվել են շնորհավորագրերով և հուշանվերներով:



գ/ «Լոռվա հարսանիք» հանդիսություններ համայնքներում:



դ/ «Վարդավառ» հանդիսություն Գյուլագարակ համայնքի «Հերիաթ» հանգստյան գոտու տարածքում, որտեղ մասնակցել են մարզի գեղարվեստական համույթներ, անհատ կատարողներ, տեղի են ունեցել մարզական ցուցադրություններ, թատերականացված ներկայացումներ: Հանդիսության ավարտին, միջոցառմանը մասնակցողների համար կատարվել է մատաղօրհնություն:



Այլ միջոցառումների թվում՝

Վանաձորի Սբ. Գրիգոր Նարեկացի եկեղեցու սրահ:

- ՀՀ ժող. արտիստ, կինոռեժիսոր, վավերագիր Արտավազդ Փելեշյանի ծննդյան 79 – ամյակին նվիրված հանդիսություն:
- Այվազովսկի 200:
- Համերգ «Երաժշտական խճանկար» նվիրված մայիսյան հաղթանակներին:

Լոռու մարզային գրադարան.

- Հանդիսություն նվիրված գրադարանավարի օրվան:
- Ազնեսա Խաչատրյանի ձեռքի աշխատանքների ցուցահանդես:
- Վալտեր Թորոսյան 81, Հ.Սարուխան 70, Մ. Սարգսյան 90, Ս. Սուկրատյան 90, միջոցառումներ:
- Հայոց Բանակի, Մայիսյան հաղթանակներին նվիրված հանդիսություններ

Վանաձորի Հ. Իգիթյանի անվ. գեղագիտության ազգային կենտրոն.

- Ֆուցահանդես՝ նվիրված Հենրիկ Իգիթյանի ծննդյան 85-ամյակին:
- Ֆոտոգեղարվեստ Ժիրայր Աղավելյանի անհատական ցուցահանդես:
- Երիտասարդների և սիրո բարեխոս Սուրբ Սարգսի տոնին նվիրված միջոցառում՝ ցուցահանդես:
- Չարենց 120: «Մահվան տեսիլ» ֆիլմի դիտում:
- Անուշ Ղարաբեշիշյանի մետակսանկարչության անդրանիկ ցուցահանդեսի բացում:
- Ռայա Ղարաբեկյանի ստեղծագործությունների ցուցահանդեսի բացումը՝ նվիրված վաստակաշատ շինարար, հայրենական պատերազմի վետերան Արամ Ղարաբեկյանի ծննդյան 100-ամյակին:

Ստ. Զորյանի տուն թանգարան.

- Չարենց 120: Հ.Մաթևոսյան 82: Ս. Զորյան 128, Հ. Սարուխան 70, Ս. Զուլոյանին նվիրված գրական-երաժշտական ցերեկույթներ:
- Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվան նվիրված «Մշակութային ժառանգությունը և կայուն զբոսաշրջությունը» խորագրով միջոցառումներ:
- Տուն-թանգարանի հյուրընկալ հարկի տակ ավանդաբար նշվող տոներից է Ամենայն հայոց բանաստեղծի ծննդյան օրը, որը վերիջին տարիներին արժևորվում է նաև որպես Գիրք նվիրելու օր: Այս անգամ կազմակերպված

միջոցառումը կրում էր «**Իմ Թումանյանը**» խորագիրը և նվիրված էր մեծն լոռեցու ծննդյան 148-ամյակին ու Մայրենի լեզվի օրվան:



Վանաձորի Կ.Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան:

- ՀՀ վաստակավոր նկարիչ, Վանաձորի պատվավոր քաղաքացի **Անատոլի Ավետյանի** ստեղծագործությունների անհատական ցուցահանդեսը՝ նվիրված հեղինակի ծննդյան 65-ամյակին:
- Բաթումահայ երաժիշտ, երգահան, ջութակահար-ջութակագործ **Հրաչյա Սեչենյանի** ստեղծագործությունների ցուցահանդեսը:
- Լոռու արվեստագետների ստեղծագործությունների «**ԲԱԶՄԱՇԱՎԻՂ** վանաձորյան ներկայանակ» խորագրով ցուցահանդեսը:
- Կանանց տոնին նվիրված «**ՀԱՎԵՐԺԻ ԳՐԱՎԱԿԱՆԸ**» խորագիրը կրող ցուցահանդես:
- Վիտուտաս Բիկաուսկաս «**Պատմությունը**» անհատական ցուցահանդես :
- Երջանկահիշատակ գեղանկարիչ **Վլադիմիր Վարդանյանի** ստեղծագործությունների անհատական ցուցահանդես:
- **Զավեն Սարգսյանի** լուսանկարչական աշխատանքների ցուցահանդես:

«ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՆԳԱՌ» միջոցառումների շրջանակներում՝

- Հայաստանի երգի թատրոնի համերգները Վանաձոր, Սպիտակ, Ալավերդի, Ստեփանավան համայնքներում:
- Կոմիտասի անվան լարային քառյակի և Ժողովրդական նվագարանների համույթի համերգը Վանաձորի Էդ. Կզարթմյանի անվան երաժշտական դպրոցի դահլիճում:
- Հնագույն երաժշտության «ՏԱՂԱՐԱՆ» համույթի համերգը:
- Վաստակավոր կոլեկտիվ Հայաստանի Ազգային Ակադեմիական երգչախմբի համերգը, Վանաձորի Շ. Ազնավուրի անվան մշակույթի պալատում, խմբավար՝ Հ. Չեքիջյան:
- «Հայաստան, ի՛մ սեր» խորագրով համերգների կազմակերպումը Սպիտակ, Ալավերդի, Օձուն, Վանաձոր, Տաշիր, Ստեփանավան համայնքներում:

Վանաձորի Հովի. Աբեյանի անվան պետական դրամատիկական թատրոն:

- Հովհաննես Աբեյանի անվան հանրապետական թատերական փառատոն, որը նվիրված է եղել մեծանուն գրող-արձակագիր Հրանտ Մաթևոսյանին:
- Նելլի Շահնազարյանի «Շատերից մեկը» տրագիկոմեդիա ներկայացում, դերակատար՝ Ազնեսա Շահնազարյան:
- Տիգրան Հարությունյանի «»Սև եկեղեցու ճակատամարտը» Ղարաքիլիսայի Հերոսամարտին նվիրված կտավի հանդիսավոր բացումը:
- «Համլետ Machine» մոնոներկայացման պրեմիերա, դերակատար Նարեկ Բաղդասարյան:
- Լրագրող, մշակութաբան Ջանիբեկ Ղուկասյանի ծննդյան 80-ամյակին նվիրված երեկո:
- Գեղագիտության Ազգային Կենտրոնի Փոքր Թատրոնի «ՄԻ ԼՔԻՐ ԻՆՁ» ներառական պարային ներկայացում:
- Հայաստանում Ճապոնիայի դեսպանատան և ՀՀ մշակույթի նախարարության նախաձեռնությամբ «Խաղաղության ծայներ» խորագիրը կրող Ճապոնական թմբուկի համերգը:
- «Վանաձորի մանկատուն» ՊՈԱԿ-ի հիմնադրման 20-ամյակին նվիրված համերգ-հանդիսություն:

ՀՀ Սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ 2017թ. սեպտեմբերի 27-ին «Երգում ենք Կոմիտաս» համահայկական փառատոնի շրջանակներում Լոռու մարզի Վանաձորի Էդ. Կզարթմյանի անվան երաժշտական դպրոցում կայացել է համերգ-հանդիսություն, մասնակցությամբ սփյուռքից ժամանած պարային համույթների,

երգչախմբերի և անհատ կատարողների: Համերգին իր մասնակցությունն է ունեցել Վանաձորի քաղաքապետարանի կամերային երգչախումբը:

Առնո Բաբաջանյանի անվան Հայ-Ռուսական փառատոնի շրջանակներում, ՌԴ պաշտպանական նախարարության կենտրոնական ռազմական նվագախմբի համերգը, Վանաձորի Հայքի հրապարակում:

Վանաձորի Էդ. Կզարթմյանի անվան երաժշտական դպրոցի համերգասրահում «Ասմունքի հանրապետական մանկապատանեկան 11-րդ մրցույթ-փառատոն»-ի Լոռու մարզային փուլի կազմակերպումը:

Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում կայացած «Մշակութային Վերածնունդ» համահայկական փառատոնին Լոռու մարզից մասնակցել են Վանաձոր, Շահումյան, Մեծավան համայնքներից պարային համույթներ, անհատ ստեղծագործողներ:

«ՊԱՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ» համերգ-հանդիսություններ:

«Լոռի» ժամանցի կենտրոն. Աշնանային պարահանդես

Հայ երգի, պարի, երաժշտության համաքաղաքային մանկապատանեկան 28-րդ փառատոնի եզրափակիչ հանդիսություն, նվիրված երեխաների պաշտպանության միջազգային օրվան:

«Ամերիկյան մշակութային շրջագայություն 2017» շրջանակներում Պետական Ջազ Նվագախմբի համերգը, Վանաձորի Շ. Ազնավուրի անվան մշակույթի պալատում: «Հորովել» մանկապատանեկան պարային համույթի ստեղծման 25 – ամյակն նվիրված հոբելյանական հանդիսություն:

Վանաձորի նկարիչների գեղանկարչական աշխատանքների ցուցահանդեսը, Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոնի դահլիճում:

Մոսկվայի «ԶՎԱՐԹՆՈՅ» հայկական մշակութային հիմնադրամի նախաձեռնությամբ կազմակերպվել է Սբ. Սարգսի տոնին նվիրված համերգ-հանդիսություններ մարզի Վանաձոր, Ստեփանավան, Ալավերդի քաղաքներում:

- ԱՀ «ՄԵՆՔ ԵՆՔ ՄԵՐ ՍԱՐԵՐԸ» երգի-պարի պետական համույթի համերգները Վանաձոր, Սպիտակ, Ալավերդի, Ստեփանավան և այլ համայնքներում:

Կազմակերպվել է «Ասմունքի հանրապետական մանկապատանեկան 10-րդ և 11-րդ մրցույթ-փառատոն»-ների Լոռու մարզային փուլերը:

10-րդ փառատոնում հաղթողներ են ճանաչվել.

11-14 տարիքային խմբում Շահումյանի միջնակարգ դպրոցի աշակերտուհի **Ալիսա Սարգսյանը 1-ին տեղ**, Վանաձորի թիվ 1 հիմնական դպրոցի աշակերտ **Գևորգ Ղույսյանը 2-րդ տեղ**, Վանաձորի թիվ 4 հիմնական դպրոցի աշակերտ **Արամ խաչիկյանը 3-րդ տեղ**:

15-17 տարիքային խմբում հաղթողներ ճանաչվեցին՝ Վանաձորի թիվ 5 ավագ դպրոցի աշակերտուհի **Անի Տիրացույանը 1-ին տեղ**, Վանաձորի թիվ 4 հիմնական դպրոցի աշակերտուհի **Մերի Միքայելյանը 2-րդ տեղ**, Վանաձորի թիվ 5 ավագ դպրոցի աշակերտ **Վարդան Կլեկյանը 3-րդ տեղ** ովքեր Երևանում մասնակցել են հանրապետական փուլին և արժանանացել տարբեր կարգերի մրցանակների և հուշանվերների:



11 – րդ մրցույթ-փառատոնի Լոռու մարզային փուլում հաղթողներ են ճանաչվել.

11-14 տարիքային խմբում **Ալեքսանդր Խալաթյանը՝** Ստեփանավանի թիվ 1 հիմն/դպրոց, **Մարիամ Գրիգորյանը՝** Վանաձորի թիվ 16 հիմն/դպրոց, **Անահիտ Գրիգորյանը՝** Վանաձորի թիվ 4 հիմն/դպրոց:

15-17 տարիքային խմբում **Կիմա Պողոսյանը՝** Վանաձորի թիվ 17 ավագ դպրոց, **Ռիմա Կոստանդյանը՝** Ստեփանավանի թիվ 1 վարժարան, **Ագապի Հովսեփյանը՝** Վանաձորի տարածաշրջանային պետ. քոլեջ, ովքեր 2018թ. ապրիլին Երևանում կմասնակցեն հանրապետական փուլին:

Ֆրանկոֆոնիայի օրերին նվիրված միջոցառումներ են կազմակերպվել Լոռու մարզային գրադարանում, մարզի մի շարք մշակույթի տներում և ակումբներում, հանրակրթական դպրոցներում:

Դսեղի Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանի բակում պաշտոնապես բացվեց թումանյանական հերոսների փայտե քանդակների պուրակը, նոր ենթակառուցվածքային շինությունը, որը կառուցվել է ամերիկահայ երաժիշտ, բարերար Աշոտ Տիգրանյանի ներդրումներով: Դսեղի հրապարակում բացվեց թումանյանական քարե քանդակների հրապարակը, որը նույնպես իրականացվել է մշակույթի նախաձեռնությամբ և աջակցությամբ: Մարզի համար այս կարևոր միջոցառմանը մասնակցում էին ՀՀ մշակույթի նախարար Արմեն Ամիրյանը և Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը:





ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ **Տիգրան Մանսուրյանի** համերգը կայացել է Էդ. Կզարթմյանի անվան երաժշտական դպրոցի դահլիճում:

Հայաստանի գուսանական և ժողովրդական երգի պետական անսամբլի համերգը վանաձորի Գուսան Զաքարյանի անվան մշակույթի տան համերգասրահում:

«Ազգային Գրադարանային Շաբաթ» ծրագրի շրջանակներում Լոռու մարզային գրադարանում և մարզի շուրջ 47 գրադարաններում կազմակերպվել են բազմաթիվ միջոցառումներ, գրական-երաժշտական ցերեկույթներ, որոնք անցել են պատշաճ մակարդակով:

«Թանգարանային գիշեր» խորագիրը կրող միջոցառումներ են կազմակերպվել մարզում գործող բոլոր թանգարաններում:

Երեխաների պաշտպանության օրվան նվիրված բազմաթիվ միջոցառումներ են կազմակերպվել մարզի համայնքներում: Մասնավորապես՝ Վանաձորի Հայքի հրապարակում կավճանկարի մրցույթ, Գեղագիտության ազգային կենտրոնի և գեղարվեստի դպրոցի ցուցասրահներում սաների ստեղծագործությունների ցուցադրություն, մանկական- թատերական ներկայացումներ մշակույթի տներում և ակումբներում:

Ուսուցիչների միջազգային օրն այն եզակի տոներից է, որն առանձնակի երախտագիտությամբ է նշում յուրաքանչյուր քաղաքացի՝ սիրով հիշելով, իր մանկավարժներին, իր առաջին ուսուցչին: Այն շնորհակալական խոսքեր հնչեցնելու և մեկ հրաշալի ու սպասված առիթ է: Տոնը երբևէ չի անտեսվում նաև մարզային իշխանությունների կողմից:



Ղարաբաղյան ազատամարտում ընկած զինվորների հուշաքարի մոտ կազմակերպվել է **Անհայտ Կորած Ազատամարտիկների** օրվան նվիրված միջոցառում, որտեղ իրենց մասնակցությունն էին բերել անհայտ կորած զինվորների հարազատներ, պետական և հոգևոր այրեր, վետերաններ, ազատամարտիկներ, մտավորականներ, ուսանողներ: Ծաղկեպսակների և ծաղիկների խոնարհումից հետո ելույթ ունեցան պատմաբան Յուրա Ղուլյանը և վետերաններ: Անհայտ կորած զինվորների հարազատներին Լոռու մարզպետի կողմից հատկացվել է դրամական օգնություն: Միջոցառումը շարունակվել է Վանաձորի գեղագիտության ազգային կենտրոնում, որտեղ հանդես են եկել ասմունքողներ և անհատ երաժիշտ-կատարողներ:

«Բերքի տոն-2017» տոնահանդեսն այս տարի առաջին անգամ հանդիսավորությամբ նշվեց Վանաձորի Հայքի հրապարակում: Տոնակատարությունը համախմբել էր մարզի համայնքների հարյուրավոր բնակիչների, հյուրերի հանրապետության տարբեր մարզերից, մայրաքաղաքից և արտերկրից: Մարզի տասնյակ համայնքներ, ձեռնարկատերեր ու անհատ ձեռներեցներ, հասարակական կազմակերպություններ պատրաստել էին ճոխ ու ինքնատիպ ձևավորված տաղավարներ, ուր ներկայացված էին տարվա ընթացքում արտադրված բազմազան բերքն ու բարիքը, լոռվա ավանդական խոհանոցն ու Լոռու կենցաղին բնորոշ կիրառական իրերը, ձեռքի աշխատանքներ:

Համերգային ծրագրում ընդգրկվել են մարզի մանկապատանեկան պարային համույթներ, անհատ կատարողներ, մարզական ցուցադրական ելույթներ:



Ախթալա համայնքում Կազմակերպվել է ավանդույթ դարձած **«Խորովածի տոն 2017» մրցույթ-փառատոնը**: Հանդիսությանը մասնակցել են մարզի լավագույն համերգային կոլեկտիվներ և անհատ կատարողներ:

«Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային թատրոնների **12-րդ** միջազգային փառատոնի կազմակերպումը մարզի համայնքներում որտեղ ներկայացումներով

հանդես են եկել հանրապետության և մի շարք արտասահմանյան երկրների տիկնիկային թատրոններ:

Ավանդույթ են դարձել Լոռու մարզի հետ բարեկամության խոր արմատներ ձգած ԱՀ Մարտակերտի վարչական շրջանի դպրոցականների այցելությունները Լոռի, որտեղ բնության գրկում գտնվող «Ծիծեռնակ» և «Գուգարք» ճամբարներում նրանք հանգստանում են, կազդուրվում, բարեկամանում տեղի երեխաների հետ, էքսկուրսիաների շնորհիվ հաղորդակից դառնում մայր հայրենիքի պատմաճարտարապետական արժեքներին, այցելում թանգարաններ, պատմական վայրեր:

Մշտապես աջակցություն է ցուցաբերվում մարզում գործող Վանաձորի Ուկրաինական համայնքի՝ «**Վերբիչենկա**» երգչախմբին, ովքեր մշտապես մասնակցում են կազմակերպվող մարզային միջոցառումների, ուկրաինայի անկախության օրվան նվիրված միջոցառումներին, հարկ եղած ժամանակ հյուրախաղային ծրագրերին:

Հիշատակի տուրք է մատուցվել 1988 թ. արհավիրքի զոհերին: Լոռու մարզի Հայ Առաքելական եկեղեցիներում կատարվեց հոգեհանգստի կարգ: Վանաձորի Սուրբ Աստվածածին եկեղեցու Նահատակաց պուրակում հոգեհանգստյան աղոթք հնչեցվեց թեմակալ առաջնորդ Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանի հանդիսապետությամբ, որից հետո երկրաշարժի զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթող-խաչքարին ներկաները՝ Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը, Վանաձորի քաղաքապետ Մամիկոն Ասլանյանը, մարզային և քաղաքային իշխանությունների, ավագանու, մտավորականների ու հոգևոր դասի ներկայացուցիչները, բազմաթիվ քաղաքացիներ ծաղիկներ ու ծաղկեպսակներ խոնարհեցին: Հուշակոթողին ծաղկեպսակներ էին դրվել նաև ՀՀ նախագահի և ՀՀ կառավարության կողմից:



ՀՀ Լոռու մարզում 2017թ. ընթացքում իրականացված միջոցառումներ

h/ h	Ազգային պետական և տոներ	Հիշատակի օրեր	Հոբելյանակ ան ծննդյան տարեթվեր	Ավանդական տոներ	Այլ միջոցառում ներ	Ծանոթու թյուն
1.	9. Այդ թվում՝ 1.Ամանոր ի և Սբ. ծննդյան 2. Բանակի օր 3.Կանանց տոն 4.Աշխատ անքի օր	6. Այդ թվում՝ 1.Ցեղասպան ության 2.Մեռելոցի օր 3.Բռնադատվ ածների 4.Երկրաշարժ ի	22 1.Հ.Թումանյա ն 148 2.Կոմիտաս 148 3.Ա.Խսահակ ան 142 4.Հ.Շիրազի 103 5.Պ. Սևակ 93 6. Ս.Ջորյան 128	9 Այդ թվում՝ 1.Ծաղկի տոն 2.Թարգմանչ աց տոն 3. «Վարդատոն» 4.Խաչվերաց տոն 5.«Խորովածի » տոն	85. / Համերգ- հանդիսությո ւններ, Գրական- երաժշտակա ն ցերեկույթներ , Մրցույթ- փառատոներ պարի-երգի- ասմունքի, ժող. նվագարանն երի,	Ընդհան ր 136

5. Հաղթ. և խաղաղության օր	5. Անհայտ կորած ազատամարտիկների	7. Հ. Մաթևոսյան 82 8. Ա. Բաբաջանյանի 96	6. Տիկնիկային թատրոնների 11-րդ միջգ. փառատոն	Ցուցահանդես-վաճառք, Գրքի շնորհանդեսներ, թատերական ացված հանդիսություններ և այլ
6. Հանրապետ. օր	6. Ադրբեջանում	9. Ա. Փելեշյան 79	7. Ավանդական «Բերքի տոն 2016»	
7. Սահմանադր. օր	կազմակերպված ջարդեր	10. Հ. Սարուխան 70	8. «Պանրի տոն»	
8. Անկախության օր	7. «Սուրբ Խաչի» տոն	11. Չարենց 120 և այլ...	9. «Համբարձման» տոն	
9. Երկրապահի օր				

ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

- Մշակութային հաստատությունների շենքային պայմանների բարելավում:
- Առավել նշանակալից պատմամշակութային հուշարձանների ընդգրկում զբոսաշրջության երթուղիներում:
- Մշակութային կառույցներում տեխնիկական սարքավորումների հագեցվածության ապահովում ժամանակակից միջոցներով:
- Մշակույթի ոլորտի աշխատողների սոցիալական վիճակի բարելավում և աշխատավարձի բարձրացում, մասնավորապես աշխատողների ընդգրկումը սոցիալական ապահովագրության փաթեթի մեջ:

ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Սպորտի և երիտասարդության ոլորտներում 2017թ-ի ընթացքում իրականացվել են հերկյալ միջոցառումներն ու մրցաշարերը.

❖ 2017թ. փետրվարի 19-ին Թեժ լեռան հովտում կազմակերպվել և անց է կացվել <<**Լոռվա ձմեռ-2017**>> 47-րդ ավանդական մարզատոնահանդեսը:




Համաձայն միջոցառման ծրագրի, Թեժ լեռան հովտում կազմակերպվել և անց են կացվել տարբեր մարզաձևերից և ազգային խաղերից մրցաշարեր, որոնց հաղթողները պարգևատրվել են պատվոգրերով և նվերներով:

2017թ.-ի մայիսին Վանաձորում անց է կացվել <<<< **Լոռու մարզպետի գավաթ**>> **մրցաշարը**՝ ֆուտբոլ մարզաձևից, որին մասնակցել են տարածաշրջաններում հաղթած թիմերը, ինչպես նաև Վանաձորից 14 թիմ /ընդհանուր 20 թիմ/: Մրցաշարի



հաղթող է ճանաչվել Լոռու մարզպետարանի թիմը: Հաղթող և մրցանակային տեղեր զբաղեցրած թիմերը պարգևատրվել են մարզպետի պատվոգրերով, մարզպետի գավաթներով, մեդալներով, դրամական պարգևներով:





Մայիս ամսին Երևանում կայացավ 4-7-րդ դասարանցիների սպորտլանդիա մարզական միջոցառման հանրապետական փուլը, որտեղ Լոռու մարզը ներկայացնում էր մարզային փուլում հաղթող ճանաչված Գուգարք համայնքի միջնակարգ դպրոցի հավաքական թիմը: Մրցմանը գուգարքցիները պատշաճ մասնակցություն ունեցան՝ գրավելով 3-րդ մրցանակային տեղ:

❖ Կազմակերպվել են հանրակրթական դպրոցների սովորողների երկրորդ հանրապետական ուսումնամարզական խաղերը, որի Լոռու մարզային փուլում հաղթող է ճանաչվել Վանաձորի թիվ 23 հիմնական դպրոցի թիմը:


❖ Կազմակերպվել են ՀՀ Նախագահի մրցանակի համար **<<Լավագույն նախադպրոցական հիմնարկ>>** մրցույթի տարածաշրջանային, մարզային և հանրապետական/սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հետ համատեղ/ փուլերը: Մարզային փուլի հաղթող է ճանաչվել Վանաձորի թիվ 31 ՆՈՒՀ-ի թիմը, որը մասնակցել է հանրապետական եզրաձակիչ փուլին:

❖ Հուլիս ամսին կայացել են **ՀՀ անկախության 26-րդ տարելիցին նվիրված ամենամյա դպրոցականների մարզական խաղերի տարածաշրջանային, մարզային և հանրապետական եզրափակիչ փուլի մրցումները**, որին մասնակցել են Լոռու մարզի հավաքական թիմերը: Մեր մարզը ներկայացնող թիմերը եզրափակիչ փուլում գրավել են 2 առաջին տեղ / սեղանի թենիս- աղջիկներ, սեղանի թենիս- տղաներ/:

❖ Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության և Վանաձորի քաղաքապետարանի ենթակայության տակ գործող

շախմատի դպրոցի ջանքերով կայացել են **դպրոցականների շախմատի օլիմպիադայի ներդպրոցական, համայնքային և մարզային փուլերը**:

❖ Մարզի հանրակրթական դպրոցների 1-6-րդ դասարանի աշակերտների շրջանում կազմակերպվել են **ՀՀ «Ազգային ժողովի Գավաթ»-ի խաղարկության**



մրցումների ներդպրոցական, տարածաշրջանային, մարզային փուլերը: 3-6-րդ

❖ դասարանի 1-ին տեղ գրաված թիմերը «Լոռու մշակույթ, սպորտ երիտասարդություն» հիմնադրամի կողմից ստացել են մարզահագուստ և մարզակոշիկ հանրապետական փուլին մասնակցելու համար /թվով 12 աշակերտ/:


❖ Կազմակերպվել են ՀՀ Նախագահի մրցանակի համար **«Լավագույն մարզական ընտանիք»** մրցույթի 2017թ. տարածաշրջանային, մարզային փուլերը: Հանրապետական փուլում Լոռու մարզը ներկայացնող Հանիսյանների ընտանիքը գրավեց 2-րդ, իսկ Նազարյանների ընտանիքը չորրորդ տարին անընդմեջ գրավեց առաջին տեղ:



Կազմակերպվել են <<Տարեցների մարզական խաղեր>> մրցույթի տարածաշրջանային և մարզային փուլերը, որոնց արդյունքում ձևավորվել է Լոռու մարզի հավաքական թիմը: Ծաղկաձորում կայացած եզրափակիչ փուլում լոռեցիները հաջող են մասնակցել՝ թիմային հաշվարկում գրավելով 2-րդ պատվավոր տեղը:



2017թ. Օգոստոսի 21-27ը Ծաղկաձորում անց է կացվել <<**Բազե-2017**>> երիտասարդական հավաքը, որին մասնակցել է նաև Լոռու մարզը ներկայացնող ջոկատը: Լոռեցի երիտասարդները փայլուն մասնակցություն են ունեցել հավաքի ընթացքում կազմակերպված մրցումներին՝ չորրորդ տարին անընդմեջ ճանաչվելով հավաքի լավագույն ջոկատ:



Սեպտեմբեր ամսին կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն հաշմանդամ մարզիկ>> մրցույթի Լոռու մարզային փուլը, որի հաղթողները մասնակցել են Ծաղկաձորում անցկացված եզրափակիչ փուլին: Գրավելով 3 առաջին և 1 երկրորդ տեղ, Լոռու մարզի թիմը երկրորդ տարին անընդմեջ կանգնեց պատվո հարթակի ամենավերին



աստիճանին:

Հոկտեմբերի 1-3-ը Վանաձորում սպորտի և երիտասարդության հարցերի

Նախարարության հետ համատեղ կազմակերպվել են **առաջին գյուղական մարզական խաղերի** հանրապետական եզրափակիչ փուլը, որին մասնակցել են 10 մարզերի և Արցախի Հանրապետության հավաքական թիմերը: Լոռու մարզի հավաքական թիմը, այս մրցմանը ևս հաջող մասնակցություն ունեցավ՝ ընդհանուր հաշվարկում գրավելով 2-րդ տեղ:



Հոկտեմբերին Երևանում կայացավ հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանցիների 1-ին հանրապետական սպարտակիադան՝ հնգամարտ, վոլեյբոլ, բասկետբոլ և սեղանի թենիս մրցաձևերից: Լոռու

մարզի հավաքական թիմերը, որոնք ձևավորվել էին մարզային փուլի մրցումների արդյունքում մասնակցեցին հանրապետական եզրափակիչ փուլին: Լոռեցիները գրավելով 2 առաջին և 2 երկրորդ տեղ ընդհանուր հաշվարկում գրավեցին 3-րդ մրցանակային տեղ:

❖ Սեպտեմբերին մարզի թվով 7 քաղաքներում և Գուգարք համայնքում կազմակերպվել են **մարզական փառատոներ**, որոնց ընդհանուր թվով մասնակցել են շուրջ 7.000 մարդ:



❖ Հոկտեմբերին կազմակերպվել են ավագ տարիքի **դպրոցականների ամենամյա ռազմամարզական խաղերի** դպրոցական, փարաօքային և մարզային փուլերը: Մարզային

փուլում հաղթող է ճանաչվել Լեռնապատի դպրոցի թիմը, որը նոյեմբերի 1-4 Երևանի Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում մասնակցել է հանրապետական եզրափակիչ փուլին՝ գրավելով 4-րդ տեղ:

❖ Դեկտեմբեր ամսին ամփոփվել են **Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն քաղաքային մարզական համայնք>>** > հանրապետական մրցույթների համար ներկայացված հայտերը: <<Լավագույն քաղաքային մարզական համայնք>> անվանակարգում առաջին տեղ է գրավել Լոռու մարզը ներկայացրած Վանաձոր համայնքը:



❖ 2017թ. ընթացքում ՀՀ Լոռու մարզպետին կից գործող երիտասարդական խորհուրդը քննարկել է մարզի երիտասարդությանը հուզող բազմաթիվ խնդիրներ և ծրագրեր, ուսումնասիրվել են բազմաթիվ առաջարկություններ:

2017թ-ի ընթացքում Հայաստանի երիտասարդական

հիմնադրամի Լոռու մարզային կենտրոնի հետ համատեղ կազմակերպվել են հանդիպումներ մարզի առավել ակտիվ երիտասարդների հետ: Տարբեր թեմաներով կազմակերպվել են բազմաբնույթ քննարկումներ, կլոր սեղաններ մարզի տարածքում գործող հասարակական կազմակերպությունների, ԲՈՒՀ-երի ուսնողական խորհուրդների այլ շահագրգիռ կազմակերպությունների և անհատների հետ:

ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

- ❖ .Վանաձորի մարզադաշտի վերակառուցում /կիսթանի ֆուտբոլ մարզաձևի զարգացմանը, թիմերը հնարավորություն կունենան խաղալ ՀՀ առաջին և բարձրագույն խմբերի առաջնություններում/
- ❖ Վանաձորի ճոպանուղու վերակառուցում /կիսթանի ձմեռային մարզաձևերի զարգացմանը, ինչպես նաև զբոսաշրջության զարգացմանը/
- ❖ Մարզադպրոցների շենքային պայմանների բարելավում, գույքով ապահովում /հիմնանորոգում, նորոգում, ջեռուցման համակարգերի ներդնում/ Մարզադպրոցների շենքային պայմանների բարելավման և գույքով ապահովման դեպքում կավելանա սպորտով զբաղվող մարզիկների թիվը:
- ❖ Վերապատրաստում չանցած և համապատասխան որակավորում չունեցող մարզիկների թիվը /որակյալ մարզիկներ ունենալու դեպքում, կբարձրանան մարզական արդյունքները/
- ❖ Խոշորացված համայնքներում մարզադպրոցների բացակայություն /բազմաթիվ երեխաներ կհաճախեն մարզական խմբակներ/
- ❖ Խոշոր քաղաքներում երիտասարդական կենտրոնների բացակայություն/հնարավոր կլինի երիտասարդների համար կազմակերպել բազմաբնույթ միջոցառումներ/

2018 թ. նախատեսվող աշխատանքների հիմնական ուղղությունները

Առաջիկա տարիների կրթության զարգացման թիրախները, գերակայությունները և գործողությունների շրջանակը միտված են լինելու առկա խնդիրների լուծմանը՝ ուշադրությունն առավելապես կենտրոնացնելով կրթության առաքելության, հայրենասիրական դաստիարակության, որակյալ բովանդակության, պետության առջև կանգնած մարտահրավերների վրա: Ուստի վերոգրյալի իրականացումն ապահովելու նպատակով առաջնահերթ եմ համարում նշել հետևյալ ուղղությունները.

1. Կրթության որակի առաջնահերթության ամրագրում և բոլոր հնարավոր միջոցների ուղղում ուսուցման որակի և մակարդակի բարձրացման վրա: Հնարավոր միջոցների շարքում առավել գործնականը համարել հետևյալը. յուրաքանչյուր դպրոց ամեն ուսումնական տարվա սկզբին ներկայացնում է տեղեկանք՝ այդ դպրոցից բուհ ընդունված շրջանավարտների և առարկայական օլիմպիադաներում հաջողություններ ունեցած աշակերտների վերաբերյալ: Այս երկու չափանիշները, չանտեսելով մյուսները, լավագույնս կարտահայտեն դպրոցում կատարված աշխատանքների ծավալը և որակը: Արդյունքների ոչ բավարար լինելու դեպքում դպրոցի տնօրենը պարտավոր է տալ հիմնավորված բացատրություն:

2. Շարունակել հետևողական աշխատանքը դպրոցի խնայողությունների նպատակային օգտագործման ուղղությամբ: Վերջին տարիների փորձը, երբ մի շարք դպրոցների խնայողությունների հաշվին իրականացվեցին վերանորոգման աշխատանքներ, ամբողջությամբ իրեն արդարացրեց: Եվ այս ուղղությունը նույնպես պետք է համարվի կարևորներից: Ինչպես նաև խնայողությունների հաշվին դպրոցների նյութատեխնիկական բազայի հարստացումը, մասնավորապես, համակարգչային դասարանների համալրումը ժամանակակից համակարգիչներով և տեխնիկական այլ միջոցներով, ջեռուցման արդյունավետ համակարգերի տեղադրում, բուժկետերի կահավորում և այլն:

3. Հետևողական աշխատանք տանել դպրոցների կողմից սահմանված կարգերի (օրենք, կառավարության որոշում, նախարարի հրաման և այլն) հստակ պահպանման ուղղությամբ: Ճիշտ է՝ այս ուղղությամբ դրական տեղաշարժեր կան, սակայն դա դեռ բավարար չէ: Դեռևս հանդիպում են խախտումներ դպրոցների կոմպլեկտավորման հետ կապված, այլ դեպքեր, երբ դպրոցի տնօրենը հանիրավի փոփոխություններ է անում արդեն հաստատված տարիֆիկացիայի մեջ և այլն: Այս

խնդիրը կարևորվում է նաև այն իմաստով, որ դպրոցի տնօրենի՝ անգամ չիմացության պատճառով թույլ տրված սխալը (ինչը նույնպես ոչ մի կերպ չի կարող արդարացվել) հաճախ ընկալվում է որպես ամենաթողություն՝ դրանից բխող հետևանքներով:

4. 2018թ. վարչության աշխատանքներում կարևոր ուղղություններից է նաև համարվում նախադպրոցական կրթության նկատմամբ աջակցության և վերահսկողության իրականացումը: Ճիշտ է, այստեղ խնդիրը հիմնականում պայմանավորված է համայնքի ղեկավարով, համայնքի ունեցած հնարավորություններով, բայց անելիքներ ունի նաև մարզպետարանը՝ որպես պետական լիազորված մարմին: Գաղտնիք չէ, որ շատ դեպքերում, անգամ եթե համայնքը ունի հնարավորություններ (շենքային պայմաններ, ֆինանսներ), միևնույն է, համայնքի ղեկավարը խուսափում է նախադպրոցական հաստատություն հիմնադրելուց ավելորդ գլխացավանք չունենալու համար: Նման դեպքերում պահանջվում է լուրջ բացատրական աշխատանք, խորհրդատվություն և այլն:

Մարզում առաջնահերթ են համարվում նախադպրոցական կրթության և մատչելիության ապահովումը, հանրակրթության արդյունավետության բարձրացումը, դպրոցների նյութատեխնիկական բազայի, ուսումնաձրագրային և ուսումնամեթոդական նյութերի բարելավումը, մասնագիտական կրթության բովանդակության արդիականությունը և որակի բարձրացման խնդիրները:

Մշակույթի ոլորտում աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ելնելով մշակույթի համաչափ զարգացման մասին ՀՀ կառավարության հիմնական գերակայություններից՝ կարևորել Լոռու մշակութային արժեքների ներկայացումը արցախահայությանը՝ նպաստել հյուսիսային Հայաստանի և Արցախի ազգագրական, ծիսական առանձնահատկություններին երկկողմանի ծանոթությանը:

2. Մարզի տարածքում դպրոցահասակ երեխաների համար կազմակերպել էքսկուրսիաներ համաշխարհային մշակութային ժառանգություն հանդիսացող Հաղպատի և Սանահինի վանական համալիրներ, Օձունի, Արդվու, Ախթալայի, Քոբայրի, Հնեվանքի, Սեդվու և այլ եկեղեցիներ:

3. «Պետական աջակցություն մշակութային միջոցառումներին» ծրագրի շրջանակներում կազմակերպվող հանդիսությունները դարձնել ավելի ընդգրկուն՝

մասնակից դարձնելով ավելի շատ թվաքանակով համույթներ, անհատ կատարողներ:

4. Նպաստել դպրոցահասակ երեխաների պարբերաբար այցելությունները մարզում գործող թանգարաններ, մասնավորապես «Լոռի-փամբակ» երկրագիտական թանգարան, Վանաձորի Կերպարվեստի թանգարան, Ստեփան Զորյանի տուն-թանգարան, Դսեղում Հ. Թումանյանի տուն- թանգարան և այլ:

Սպորտի և երիտասարդության ոլորտների աշխատանքների հիմնական ուղղություններ

1. Ուշադրության կենտրոնում պահել մանուկների և պատանիների համար նախատեսվող ֆիզկուլտուրային-մարզական միջոցառումները, քայլեր ձեռնարկել մրցույթներին մանուկների և պատանիների թվաքանակի ավելացման ուղղությամբ:

2. Միջոցներ ձեռնարկել ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի և ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից կազմակերպվող շուրջ 15 մասսայական միջոցառումների մասնակիցների թիվը ավելացնելու ուղղությամբ:

3. Հատուկ ուշադրություն դարձնել նախագորակոչային և գորակոչային տարիքի պատանիների ֆիզիկական պատրաստվածության ուղղությամբ իրականացվող միջոցառումներին, մասնավորապես պատշաճ մակարդակով կազմակերպել նախագորակոչային և գորակոչային տարիքի պատանիների ռազմամարզական խաղերը:

4. Երիտասարդների առօրյան ավելի հետաքրքիր դարձնելու նպատակով Հայաստանի երիտասարդական հիմնադրամի և տարբեր ՀԿ-ների հետ համատեղ կազմակերպել զանազան միջոցառումներ՝ ընդգրկելով հնարավորինս շատ երիտասարդներ:

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության,

մշակույթի և սպորտի վարչության պետ
Մ.Սայադյան